ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼԵԶՎԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՀՐԱՄԱՆ

26 մարտի 2024 թ. հմ. 02-Լ

Ք. Երևան, Կիևյան 16, հեռ. (010) 26-68-60

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ ԱԶԴԱՐԱՐԻՆ ՏՐՎՈՂ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության լեզվի կոմիտեում ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման կարգը՝ ըստ 1-ին հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության լեզվի կոմիտեում ներքին և արտաքին ազդարարման դեպքում ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը՝ ըստ 2-րդ հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության լեզվի կոմիտեի նախագահ Սիրանուշ Դվոյանին:

ՍԻՐԱՆՈՒՇ ԴՎՈՅԱՆ

Հավելված 1
ՀՀ լեզվի կոմիտեի նախագահի
2024 թվականի մարտի 26-ի 02-Լ հրամանի

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետության լեզվի կոմիտեում *(այսուհետև՝ Լեզվի կոմիտե)* ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների հաշվառումը և ձևակերպումն իրականացնում է Լեզվի կոմիտեի նախագահի հրամանով նշանակված պատասխանատու անձը:

2. Պատասխանատու անձի անունը, ազգանունը, պաշտոնը, իր հետ կապի միջոցների (փոստային հասցե, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե) վերաբերյալ տվյալները տեղադրվում են Լեզվի կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

3. Պատասխանատու անձը ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների հաշվառումն ու ձևակերպումն իրականացնում է առանձին էլեկտրոնային և թղթային գրանցամատյաններում՝ համապատասխանաբար ըստ Ձև 1-ի և Ձև 2-ի:

4. Գրանցամատյանները վարվում են էլեկտրոնային եղանակով: Անհրաժեշտության դեպքում գրանցամատյանները Լեզվի կոմիտեի նախագահի հրամանով կարող են վարվել թղթային տարբերակով:

5. Գրանցամատյանի բոլոր էջերը մինչև հաշվառումը՝ նախապես, էլեկտրոնային կամ թղթային եղանակով ստորագրում է Լեզվի կոմիտեի նախագահը: Գրանցամատյաններում վրիպակները կարող է ուղղել միայն պատասխանատու անձը, որն ուղղման հատվածում գրառում է անում՝ այդ փաստը հաստատելով ստորագրությամբ: Ուղղումը պարտադիր հաստատում է նաև Լեզվի կոմիտեի նախագահը՝ էլեկտրոնային կամ թղթային ստորագրությամբ:

6. Ներքին ազդարարման հաղորդումների գրանցամատյանում (Ձև 1) արձանագրվում են հետևյալ տեղեկությունները՝

1) հաղորդման հաշվառման հերթական համարը.

2) հաղորդման ներկայացման օրը, ամիսը, տարեթիվը.

3) հաղորդման հաշվառման օրը, ամիսը, տարեթիվը.

4) հաղորդումը ներկայացրած անձի անունը, ազգանունը և հայրանունը,

5) հաղորդումը ներկայացրած անձի պաշտոնը.

6) հաղորդման ներկայացման կարգը՝ բանավոր կամ գրավոր.

7) հաղորդմամբ ներկայացված տեղեկության համառոտ բովանդակությունը.

8) հաղորդման առնչությամբ օրենքի հիման վրա ձեռնարկված միջոցառումների, ներառյալ պաշտպանության տրամադրված միջոցների ամբողջական նկարագիրը.

9) հաղորդման առնչությամբ օրենքի հիման վրա ձեռնարկված միջոցառումների, ներառյալ պաշտպանության միջոցների տրամադրման արդյունքը.

10) նշումներ ազդարարին ծանուցելու յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ.

11) հաղորդում ներկայացրած անձի կողմից լրացուցիչ ներկայացված պարզաբանումների, փաստաթղթերի կամ դիմումների ներկայացման օրը, ամիսը, տարին և համառոտ բովանդակությունը.

12) հաղորդում ներկայացրած անձի ստորագրությունը (հնարավորության դեպքում).

13) հաղորդման առնչությամբ այլ տեղեկություններ.

14) պատասխանատու անձի ստորագրությունը:

7. Արտաքին ազդարարման հաղորդումների գրանցամատյանում (Ձև 2) արձանագրվում են հետևյալ տեղեկությունները՝

1) հաղորդման, ներառյալ օրենքի իմաստով վերահասցեագրման ենթակա հաղորդման, հաշվառման հերթական համարը.

2) հաղորդման ներկայացման օրը, ամիսը, տարեթիվը.

3) հաղորդման հաշվառման օրը, ամիսը, տարեթիվը.

4) հաղորդումը ներկայացրած անձի անունը, ազգանունը և հայրանունը, իսկ իրավաբանական անձի դեպքում նաև ֆիրմային անվանումը, պետական գրանցման համարը, իրավաբանական անձում զբաղեցրած պաշտոնը.

5) հաղորդման ներկայացման կարգը՝ բանավոր կամ գրավոր.

6) հաղորդմամբ ներկայացված տեղեկության համառոտ բովանդակությունը.

7) հաղորդման առնչությամբ օրենքի հիման վրա ձեռնարկված միջոցառումների, ներառյալ պաշտպանության տրամադրված միջոցների ամբողջական նկարագիրը.

8) հաղորդման առնչությամբ օրենքի հիման վրա ձեռնարկված միջոցառումների, ներառյալ պաշտպանության միջոցների տրամադրման արդյունքը.

9) նշումներ ազդարարին ծանուցելու յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ.

10) հաղորդում ներկայացրած անձի կողմից լրացուցիչ ներկայացված պարզաբանումների, փաստաթղթերի կամ դիմումների ներկայացման օրը, ամիսը, տարին և համառոտ բովանդակությունը.

11) հաղորդում ներկայացրած անձի ստորագրությունը (հնարավորության դեպքում).

12) հաղորդման առնչությամբ այլ տեղեկություններ, ներառյալ օրենքի իմաստով ոչ Լեզվի կոմիտեին հասցեագրված հաղորդումների վերահասցեագրումների վերաբերյալ տեղեկություններ.

13) պատասխանատու անձի ստորագրությունը:

8. Լեզվի կոմիտեի նախագահը Հայաստանի Հանրապետության Կառավարության 15.03.2018 թվականի մարտի 15-ի 272-Ն որոշմամբ նախատեսված գրանցամատյանների պատշաճ ձևակերպման և հաշվառման նպատակով, հաղորդումն ստանալուց անմիջապես հետո և պարբերաբար՝ մինչև վարույթի ավարտը կամ օրենքով նախատեսված այլ գործողություն իրականացնելու օրը, պատասխանատու անձին պարտավոր է ողջամիտ ժամկետում տրամադրել գրանցամատյաններում հաշվառման և ձևակերպման համար անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը:

9. Պատասխանատու անձի կողմից ազդարարման հաղորդման յուրաքանչյուր գործով հաշվառման, ձևակերպմանը զուգահեռ, պահվում են հաղորդմանը վերաբերող բոլոր փաստաթղթերը, իսկ դրանց բնօրինակների՝ օրենքով սահմանված կարգով այլ անձի կամ մարմնի փոխանցելու դեպքերում, բնօրինակների պատճենները:

10. Ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների գրանցամատյանները և անհատական գործերը ենթակա են պահպանության Հայաստանի Հանրապետության Կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի 397-Ն որոշման հավելվածի «Կառավարման համակարգի կազմակերպում» գլխի 1.2-րդ ենթագլխի 25-րդ կետով վարչական վարույթների վերաբերյալ գործերի, վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների պահպանության համար սահմանված ժամկետներով:

ՁԵՎ 1

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ

Հ/Հ	Հաղորդ-ման Հաշվառ-ման հերթական համարը	Հաղորդման ներկայացման օրը, ամիսը, տարեթիվը	Հաղորդման հաշվառման օրը, ամիսը, տարեթիվը	Հաղորդումը ներկայացրած անձի անունը, ազգանունը և հայրանունը	Հաղորդումը ներկայացրած անձի պաշտոնը	Հաղորդման ներկայացման կարգը՝ բանավոր կամ գրավոր	Հաղորդմամբ ներկայացված տեղեկության համառոտ բովանդա-կությունը	Հաղորդման առնչությամբ օրենքի հիման վրա ձեռնարկված միջոցառումների ամբողջական նկարագիրը (ներառյալ պաշտպա-նության տրամադրված միջոցները)
	1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.
1.								
2.								

Հ/Հ	Հաղորդման առնչությամբ օրենքի հիման վրա ձեռնարկված միջոցառումների արդյունքը (ներառյալ պաշտպանության միջոցների տրամադրման արդյունքը)	Նշումներ ազդարարին ծանուցելու յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ	Հաղորդում ներկայացրած անձի կողմից լրացուցիչ ներկայացված պարզաբանումների, փաստաթղթերի կամ դիմումների ներկայացման օրը, ամիսը, տարին և համառոտ բովանդակությունը	Հաղորդում ներկայացրած անձի ստորագրությունը (հնարավորության դեպքում)	Հաղորդման առնչությամբ այլ տեղեկություններ	Պատասխանատու անձի ստորագրություն
	9.	10.	11.	12.	13.	14.
1.						
2.						

ՁԵՎ 2

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ

Հ/Հ	Հաղորդման հաշվառման հերթական համարը	Հաղորդման ներկայացման օրը, ամիսը, տարեթիվը	Հաղորդման հաշվառման օրը, ամիսը, տարեթիվը	Հաղորդումը ներկայացրած անձի անունը, ազգանունը և հայրանունը, իրավաբանական անձի դեպքում նաև ֆիրմային անվանումը, պետական գրանցման համարը, իրավաբանական անձում զբաղեցրած պաշտոնը	Հաղորդման ներկայացման կարգը՝ բանավոր կամ գրավոր	Հաղորդմամբ ներկայացված տեղեկության համառոտ բովանդակությունը	Հաղորդման առնչությամբ օրենքի հիման վրա ձեռնարկված միջոցառումների ամբողջական նկարագիրը (ներառյալ պաշտպանության տրամադրված միջոցները)
	1.	2.	3.	4.	5.	6.	7.
1.							
2.							

Հ/Հ	Հաղորդման առնչությամբ օրենքի հիման վրա ձեռնարկված միջոցառումների արդյունքը (ներառյալ պաշտպանության միջոցների տրամադրման արդյունքը)	Նշումներ ազդարարին ծանուցելու յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ	Հաղորդում ներկայացրած անձի կողմից լրացուցիչ ներկայացված պարզաբանումների, փաստաթղթերի կամ դիմումների ներկայացման օրը, ամիսը, տարին և համառոտ բովանդակությունը	Հաղորդում ներկայացրած անձի ստորագրությունը (հնարավորության դեպքում)	Հաղորդման առնչությամբ այլ տեղեկություններ, ներառյալ օրենքի իմաստով ոչ իրավասու մարմնին հասցեագրված հաղորդումների վերահասցեագրումների վերաբերյալ տեղեկություններ	Պատասխանատու անձի ստորագրություն
	8.	9.	10.	11.	12.	13.
1.						
2.						

Հավելված 2
ՀՀ լեզվի կոմիտեի նախագահի
2024 թվականի մարտի 26-ի 02-Լ հրամանի

Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱԶԴԱՐԱՐԻՆ ՏՐՎՈՂ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ընթացակարգը կարգավորում է Հայաստանի Հանրապետության լեզվի կոմիտեում *(այսուհետև՝ Լեզվի կոմիտե)* ներքին և արտաքին ազդարարման դեպքում ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Լեզվի կոմիտեում ներքին և արտաքին ազդարարման դեպքում ազդարարին օրենքով երաշխավորված պաշտպանության միջոցների տրամադրումն իր իրավասությունների շրջանակում ապահովում է Լեզվի կոմիտեի նախագահը:

2. ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

3. Ազդարարն ունի «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ նաև՝ «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք) 10-րդ հոդվածով սահմանված պաշտպանության՝ իրավունք, ինչպես նաև իր անձնական տվյալների գաղտնիության, վնասակար գործողություններից և դրանց հետևանքներից պաշտպանության իրավունք:

4. Ազդարարման դեպքում ազդարարի անձնական տվյալները չբացահայտելու նպատակով փաստաթղթաշրջանառությունը կատարվում է Լեզվի կոմիտեում նշանակված պատասխանատու անձի միջոցով:

5. Ազդարարի անձնական տվյալների գաղտնիությունը, ինչպես նաև ազդարարման շրջանակներում ներկայացված տեղեկությունների գաղտնիությունը պարտավոր են ապահովել Լեզվի կոմիտեի նախագահը, պատասխանատու անձը և ազդարարման գործընթացում օրենսդրությամբ ներգրավված այլ մարմիններ և անձինք:

6. Վարույթ հարուցելու դեպքում վարույթ հարուցելու մասին ակտի և վարույթի հետ կապված այլ փաստաթղթերի մեջ չեն նշվում ազդարարման փաստը և ազդարարի անձնական տվյալները: Այդ տվյալներին աշխատանքային, ծառայողական կամ այլ պարտականությունների բերումով ծանոթանալու իրավունք ունեցող անձինք պարտավոր են ապահովել դրանց գաղտնիությունը:

7. Ազդարարի անձնական տվյալները ենթակա չեն բացահայտման, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

3. ՀԱՏՈՒԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

8. Ազդարարի նկատմամբ հատուկ պաշտպանության միջոցների կիրառումն իրականացվում է «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով և այլ օրենքներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի 560-Ն որոշմամբ սահմանված կարգով:

4. ԱԶԴԱՐԱՐԻՆ ՎՆԱՍԱԿԱՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻՑ ՊԱՇՏՊԱՆԵԼԸ

9. Ազդարարին օրենքով նախատեսված վնասակար գործողություններից կամ դրանց հետևանքներից պաշտպանելու նպատակով Լեզվի կոմիտեի նախագահը՝

1) գաղտնիության ապահովման մասով կատարում է «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի 560-Ն որոշումից բխող պարտականությունները.

2) ստեղծում է ազդարարի կողմից իր ծառայողական պարտականությունների անարգել իրականացման համար բավարար պայմաններ և այդ նպատակով ամենօրյա աշխատանքային պարբերականությամբ անձամբ կամ պատասխանատու անձանց

միջոցով տեղեկանում է ազդարարի ծառայողական պարտականությունների կատարման ընթացքի վերաբերյալ, բողոքի կամ դիմումի դեպքում՝ ձեռնարկում համարժեք միջոցառումներ բողոքի կամ դիմումի կատարման ընթացքն ապահովելու նկատմամբ.

3) ապահովում է ազդարարին արհեստականորեն հանձնարարականներով չծանրաբեռնելը՝ հանձնարարականների նկատմամբ հսկողություն սահմանելու միջոցով, իսկ ազդարարի գործունեության անհարկի և ապօրինի միջամտությունների դեպքում միջոցներ է ձեռնարկում նման միջամտությունների և դրանց հետևանքների վերացման ուղղությամբ, ներառյալ իր իրավասության շրջանակում անհարկի միջամտություններ իրականացողներին օրենքով սահմանված կարգով կարգապահական պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ, իսկ ապօրինի միջամտության դեպքում՝ նաև իրավասու մարմիններին դիմելու եղանակով.

4) ձեռնարկում է համապատասխան միջոցներ ազդարարի աշխատանքային իրավունքների վերականգնման ուղղությամբ, այդ թվում՝ ազդարարին վերականգնում է աշխատանքի, հատուցում նրա կրած վնասները, ինչպես նաև ազդարարին սպառիչ խորհրդատվություն է տրամադրում ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված՝ աշխատողի կողմից պաշտպանության այլ միջոցներից օգտվելու կարգի և պայմանների մասին.

5) ձեռնարկում է իրավիճակից բխող՝ «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով ազդարարների պաշտպանության համար նախատեսված միջոցներ, ներառյալ այլ աշխատասենյակ տեղափոխելը, ազդարարի նկատմամբ վախի, սպառնալիքի, խտրականության, նրա աշխատանքային ունակությունները կամ հմտությունները կասկածի տակ առնելու կամ նրա մասին բացասական տեղեկատվություն տարածելու դեպքերում դրանք իրականացնող անձանց պարզելուն և օրենքով նախատեսված պատասխանատվության ենթարկելուն ուղղված միջոցառումներ.

6) ձեռնարկում է իրավիճակից բխող՝ ազդարարի պաշտպանությանն ուղղված անհրաժեշտ այլ միջոցներ:

10. Սույն հավելվածի 9-րդ կետով նախատեսված դեպքերի առնչությամբ ձեռնարկված միջոցառումների, դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը հաշվառվում է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2018 թվականի մարտի 15-ի 272-Ն որոշման 1-ին հավելվածով սահմանված կարգով նախատեսված գրանցամատյաններում:

11. Լեզվի կոմիտեն պարտավոր է Մարդու իրավունքների պաշտպանի հարցման հիման վրա Մարդու իրավունքների պաշտպանին տրամադրել ազդարարների իրավունքների պաշտպանության ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների, գործողությունների մասին, ինչպես նաև «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված տեղեկատվությունը:

12. Լեզվի կոմիտեն աջակցում է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված՝ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ազդարարների իրավունքների և ազատությունների պահպանմանը հետևելու և դրանց վերականգնմանը նպաստելու գործառույթներին: